

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԹԻՎ 5 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 5-Ա**  
**«18» սեպտեմբերի 2023թ.**

**ԹԻՎ 5 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ**  
**ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի ԹԻՎ 2-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ**  
**ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով թիվ 5 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի 2023 թվականի սեպտեմբերի 17-ի N 8-Ա և 9-Ա որոշումները և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 10-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ թիվ 5 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

Թիվ 5 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2023 թվականի օգոստոսի 24-ի «Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերը հաստատելու և տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և քարտուղար նշանակելու մասին» N 2-Ա որոշման 1-ին կետի.

- 1) 1-ին ենթակետից հանել «Բարնջյան Սրբուհի Աբրահամի» բառերը.
- 2) 1-ին ենթակետը լրացնել «Գասպարյան Էլեոնորա Ռաֆիկի» բառերով.
- 3) 3-րդ ենթակետից հանել «Թորոսյան Յուրի Արթուրի» բառերը.
- 4) 3-րդ ենթակետը լրացնել «Մաղաքյան Հակոբ Կարապետի» բառերով:

***Թիվ 5 ընտրատարածքային ընտրական***  
***հանձնաժողովի նախագահ՝***

***Մ.Մարտիրոսյան***